դամ, իսկ 1977 թ.՝ ակադեմիկոս, երկու անգամ՝ 1971 և 1981 թթ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, իսկ 1979 թ.՝ Ուկրաինայի պետական մրցանակի։

Ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի անմիջական ղեկավարությամբ Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ-ում իրականացվել են կառավարման ավտոմատացված համակարգերի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ու սարքավորումների մի շարք նոր տեսակներ, որոնք բարձր գնահատականի են արժանացել և լայն կիրառություն գտել ժողովրդական տնտեսության մեջ։ Նրա գործուն մասնակցությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է լայն կիրառում գտած ավտոմատացման խոշոր համալիր։ Մեծ են նրա ծառայությունները ժողովրդական տնտեսության, մասնավորապես ռազմաարդյունաբերական համալիրի նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու զարգացման բնագավառում։

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1993 թ. հունիսի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, ուր քննարկվեցին Ակադեմիայի 1992 թ. աշխատանքների արդյունքները։ Ժողովի աշխատանքներին մասնակցում էին Ամենայն հայոց կաթողիկոս, Ակադեմիայի պատվավոր անդամ Վազգեն Առաջինը, ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը, պե-

տական նախարար Ա. Ղազարյանը, բարձրագույն կրթության և գիտության նախարար Վ. Դնունին, պաշտոնական այլ անձինք, ՀԳԱԱ հիմնարկների ղեկավարներ, գիտական աշխատողներ։

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀԳԱԱ նորընտիր պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը։ Խոսելով Ակադեմիայի առաջիկա հրատապ անելիքների մասին, նա կանգ առավ Ակադեմիայի կանոնադրության ընդունման, հանրապետության բնական ռեսուրսների օգտագործման գիտական խնդիրների մշակման, ժողտնտեսության մեջ դրանց մասսայական կիրառման և այլ հարցերի վրա։ Սարգսյանը նշեց հատկապես Ակադեմիայի պատասխանատվությունը վառելիքաէներգետիկ համակարգի համար նոր տեսակի նյութեր ու սարքեր մշակելու գործում, որը պայմաններ կստեղծի, որպեսզի մեր երկիրը դուրս գա այս ծանր վիճակից։

Հանրապետության բնական ռեսուրսների օգտագործման գիտական, տեխնոլոգիական խնդիրների մշակումը և ժողովրդական տնտեսության մեջ դրանց լայն կիրառումը պահանջում են մեծ ուշադրություն դարձնել Ակադեմիայի համակարգում կիրառական հետազոտությունների և փորձարարական աշխատանքների ծավալման վրա. «Կյանքը պահանջում է, որ գիտական հետազոտությունը հասցվի իր շղթայի ավարտուն փուլին՝ գիտատեխնիկական աշխատանքների, տեխնոլոգիական, տեխնիկական նորույթների, արդյունաբերական նմուշների, դյուտերի մակարդակին, որոնք ժողովրդական տնտեսության մեջ ներդրման և համաշխարհային շուկա մուտք գործելու նպաստիչ ունեն։ Բայց այս ամենը չի նշանակում, որ Ակադեմիան հեռանում է իր ավանդական հիմնարար ուղղություններից։ «Հիմնարար հետազոտությունները եղել են, կան և մնում են մեր Ակադեմիայի գործունեության պլատֆորմ առանցքը։ Մի բան պարզ է, որ առանց գիտական հայտնագործությունների, գիտական նորույթի, տեխնիկական, տեխնոլոգիական նոր ուղղությունների, տեխնիկական դյուտերի ստեղծումը և զարգացումը համաշխարհային մակարդակով անհնար է»։

Պրեզիդենտը կանգ առավ նաև այն կարևոր խնդիրների վրա, որոնք գոյություն ունեն կենսաբանության, քիմիայի, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների, ինչպես և հայագիտության բնագավառներում։ Նա անդրադարձավ գիտական աշխատանքների հետ կապված սոցիալ-տնտեսական, ֆինանսական հարցերին՝ միաժամանակ ընդգծելով, որ շուկայական էկոնոմիկայի ձևավորման շրջանում գիտության աշխատողների սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծումը պետական հովանավորման և հասարակական հոգածության մեծ կարիք ունի։

Այնուհետև պրեզիդենտը նշեց Ակադեմիայի անելիքները գիտական թույլատրած կապերի վիճակը բարելավելու ուղղությամբ. «Ստեղծվել է մի իրավիճակ, որի հետևանքով խախտվել են ինստիտուտների ակտիվ կապերը ինչպես նախկին Խորհրդային Միության հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոնների և կազմակերպությունների հետ։ Այժմ մենք ձեռնարկում ենք մի շարք լուրջ միջոցառումներ նախ՝ Ռուսաստանի գիտական կենտրոնների, և առաջին հերթին Ռուսաստանի ակադեմիայի հետ մեր կապերի վերականգնման ուղղությամբ։ Հարցի բարդությունը մեծ չափով կապված է ֆինանսական միջոցների բացակայության հետ»։

Պրեզիդենտը անդրադարձավ Ակադեմիայի և հանրապետության բուհերի համագործակցության զարգացման հարցին։ «ԲՈՒՀ-ինստիտուտ» ընկերակցության կապերի և կառույցների զարգացումը. թույլ կտա սինթեզել մեր բուհերի գիտամեթոդական կարելիությունները Ակադեմիայի հետազոտական էքսպերիմենտալ բազայի հետ, ստեղծել ասպիրանտական ուսուցման, երիտասարդ գիտնականի ձևավորման նոր որակ»։ Ֆ. Սարգսյանը կանգ առավ Ակադեմիայի մի շարք այլ թերացումների ու խնդիրների վրա։

Ժողովում ողջույնի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց կաթողի-

կոս Վազգեն Առաջինը, որը բարձր գնահատական տվեց գիտությունների ակադեմիայի աշխատանքներին և նշեց նրա կարևոր դերը մեր հայրենիքի տնտեսական, մշակութային զարգացման գործում։ Վեհափառը միաժամանակ նկատեց, որ չնայած վերջերս Ակադեմիան անվանվեց Ազգային ակադեմիա, դա իհարկե չի նշանակում, թե պետք է սահմանափակվել միայն նեղ ազգային հարցերով և մոռացության տալ համամարդկային արժեքներն ու մշակույթը։

Այնուհետև լսվեց ՀԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանի հաշվետու զեկուցումը ՀԳԱԱ 1992 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին։ Միանգամայն հասկանալի է, նշեց զեկուցողը, որ այն ծանր պայմանները, որոնց մեջ հայտնվեց մեր հանրապետությունը, չէին կարող չազդել նաև Ակադեմիայի աշխատանքների վրա։ «Եթե վառելիքաէներգետիկ միջոցների խիստ պակասին ավելացնենք նաև սարքերի, գործիքների, տեխնիկական այլ միջոցների, ռեակտիվների, զանազան նյութերի գների անզուսպ աճը և ինֆլյացիան, ապա պարզ կդառնա, որ նման պայմաններում գիտական հետազոտությունների բարձր արդյունավետության մասին խոսելը կլիներ ինքնախաբեություն։ Այդ ամենով հանդերձ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի կոլեկտիվները արել են հնարավոր ամեն ինչ գիտական գործունեությունը չդադարեցնելու, իրենց առջև ծառացած պրոբլեմները այս կամ այն ձևով լուծելու համար։

Ծանր վիճակում է գտնվում հատկապես ԳԱԱ հրատարակչությունը, չեն տպագրվում նախորդ տարիներից կուտակված մեծ թվով աշխատություններ, քանի որ տպարանները գրեթե չեն գործում։ Առաջնային նշանակություն է վերապահվել պարբերականների հրատարակությանը։ Հաշվետու տարում հրատարակվել է 31 աշխատություն, 375 մամուլ ծավալով և 14 պարբերականներից 47 համար 303 մամուլ ծավալով։ ԳԱԱ նախագահությունը և հրատարակչության տնօրինությունը պետք է բոլոր ջանքերը գործադրեն և ինչ-որ եղանակով բեկում մտցնեն այս հարցում։

1993 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԳԱԱ աշխատողների ընդհանուր թիվը եղել է 6417, այդ թվում գիտական աշխատողներ՝ 2885, որից գիտության դոկտորներ՝ 302, գիտության թեկնածուներ՝ 1385 հոգի։ 1992 թ. հունվարի 1-ի համեմատությամբ համակարգի աշխատակիցների ընդհանուր թիվը պակասել է 1257 հոգով, որից գիտաշխատողներ՝ 125 հոգի։ 1991 թ. համեմատությամբ աշխատակիցների քանակը պակասել է 2216 մարդով, որից 455 հոգի գիտաշխատողներ։ Այսպիսով, վերջին երկու տարում, նշում է զեկուցողը, տարեկան 1100—1200 մարդով նվազում է ՀԳԱԱ աշխատողների քանակը՝ գերազանցապես սոցիալական անպաշտպան դրության հետևանքով։ Հաշվետու տարում ՀԳԱԱ համակարգում աշխատանքի են ընդունվել բարձրագույն կրթությամբ 65 երիտասարդ մասնագետներ։ Այժմ Հայաստանի ԳԱԱ կազմում կա 41 ակադեմիկոս և 65 թղթակից անդամ, 9 արտասահմանյան անդամ։

Զեկուցողը կանգ առավ նաև ասպիրանտուրայի պրոբլեմների վրա, գտնելով, որ քանի որ գիտական կադրերի պատրաստման հիմնական եղանակը ասպիրանտուրան է, հարկ է դրան վերաբերվել առանձնահատուկ ուշադրությամբ ու հոգատարությամբ։ Վերջին տարիներին մեծ դժվարությամբ են ապահովվում հատկացվող ասպիրանտական տեղերը։ 1992 թ. տարբեր մասնագիտությունների գծով հայտարարված 45 արտադրությունից կտրված և 25 արտադրությունից չկտրված տեղերում ընդունվել են համապատասխանաբար 26 և 14 ասպիրանտ։ Նախատեսված 70-ի փոխարեն ընդունվել է 40 ասպիրանտ։ Առայժմ, երբ գործնական քայլեր են կատարվում սերտացնելու ՀԳԱԱ և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կապերն ու համագործակցությունը, հարկավոր է վերականգնել նպատակային ասպիրանտուրան։ Տարիներ առաջ նախկին Խորհրդային Միության գիտական կենտրոններում Հայաստանի ակադեմիայից գործուղվում էին 35—

40 նպատակային ասպիրանտներ։ «Կասկածից վեր է, որ գիտության մի շարք ոլորտներով Մոսկվայում, Պետերբուրգում և այլ կենտրոններում բարձրորակ մասնագետներ պատրաստելու հնարավորություններն ու պայմանները ավելի լավ են քան Հայաստանում»։

Մասնավորացնելով իր խոսքը հայագիտության մասին, զեկուցողը նշեց, որ մեր Ակադեմիան միշտ էլ եղել է հայագիտության ամենախոշոր կենտրոնը։ Չմոռանանք, որ մեր շատ պատմաբաններ, հնագետներ, լեզվաբաններ ու գրականագետներ չնայած խիստ աննպաստ պայմաններին ստեղծել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ։ Մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի շարունակենք այդ ավանդույթը։

Խոսելով Ակադեմիայի այժմյան կարգավիճակի մասին, զեկուցողը նշեց, որ Հայաստանի ազգային ակադեմիայի տարալուծման վտանգը, անկայուն ու անորոշ վիճակը վերացավ, երբ Ակադեմիայի մասին հրապարակվեց հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1993 թ. մարտի 9-ի հրամանագիրը, որն ընդունվեց գոհունակությամբ, քանի որ դրանով անտարակույս ապահովվում է Ակադեմիայի կենսունակ գոյությունը և գիտության հետագա զարգացումը։ Այդ հրամանագրով ՀԳԱԱ համակարգում պահպանվում է գիտահետազոտական ինստիտուտների վարչակազմակերպական միասնությունը, Ակադեմիան ստանում է պետության կողմից հովանավորվող, ինքնակառավարվող, հիմնարար գիտություններով և դրանց փորձագիտությամբ զբաղվող հաստատության կարգավիճակ։

Զեկուցման քննարկմանը մասնակցեցին. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի տնօրեն Ս. Հովհաննիսյանը, ակադեմիկոս Մ. Զրբաշյանը, թղթակից անդամ Ս. Կապուտիկյանը, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, թղթակից անդամ Յու. Շուքուրյանը, ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լ. Աղալովյանը, ագրոտեխմիավորման տնօրեն Մ. Հովհաննիսյանը, էկոլոգո-նոոսֆերային ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար Ա. Սաղաթելյանը։

Ժողովի վերջում ելույթ ունեցավ հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, որը հատկապես նշեց հանրապետության նախագահի հրամանագրի կարևորությունը Ակադեմիայի համար։ Ըստ այդ հրամանագրի Ակադեմիան իրոք պետք է դառնա հանրապետության իշխանությունների պաշտոնական խորհրդատուն, Ակադեմիայի կողմից արված առաջարկությունները, եզրակացությունները պետք է քննարկվեն գործադիր իշխանության բոլոր կառուցվածքներում։ Տարեկան հաշվետվությանը ծանոթանալիս աչքի է ընկնում այն, որ այս դժվարին պայմաններում Ակադեմիայի ինստիտուտներում այնուամենայնիվ զգալի աշխատանք է կատարվել։

Հանրապետության փոխնախագահը անհրաժեշտ համարեց ճշգրտել, թե որոնք են այն ուղղությունները, որոնք այսօր պետք է առաջնահերթ զարգացում ապրեն, որպեսզի օգնեն մեզ մեր երկիրը դուրս բերելու ներկա ճգնաժամից։ Անդրադառնալով ՀՀ կառավարության 1992 թ. փետրվարի 10-ի որոշմանը Գ. Հարությունյանն ընդգծեց, որ այնտեղ կան լուրջ թերություններ, որ չի կարելի կազմալուծել ինստիտուտը, որ չի կարելի գիմազրկել գիտական խորհուրդը, գիտական աշխատանքի մակարդակի գնահատման հարցում պետք է գործեն հատուկ մեխանիզմներ և այլն։ Գ. Հարությունյանը կանգ առավ Ակադեմիայի հետագա աշխատանքների հետ առնչվող մի շարք այլ հարցերի վրա։